«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

17 մարտի, 2026 թ. N 5 - Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի կանոնադրության 7.2 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի 2025 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026թ. մարտի 17-ի N 5 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության
Հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի
2025թ. տարեկան գործունեության հաշվետվություն

Սույն հաշվետվությունը կազմվել է համաձայն «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2022 թվականի հուլիսի 10-ի N 18-Լ որոշմամբ հաստատված «Հարկային և իրավական այլ հարցերի» հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կանոնադրության 7.2 կետի:

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնելու նպատակով առաջնորդվել է Խորհրդի որոշմամբ հաստատված Հարկային և իրավական այլ հարցերի հանձնաժողովի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրով (այսուհետ՝ Տարեկան ծրագիր):

Ստորև, ըստ Տարեկան ծրագրով հաստատված գործառույթների, ներկայացված են Հանձնաժողոի կողմից իրականացված աշխատանքները.

1. ***Իրավական ակտերի և դրանց նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում.***

Հանձնաժողովի անդամների կողմից պարբերաբար ուսումնասիրվել են ՀՀ պետական մարմինների կողմից մշակված հարկային, մաքսային, ինչպես նաև աշխատանքային և քաղաքացիական հարաբերությունները կարգավորող օրենսդրությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրավական ակտերի նախագծերը: Որոշ նախագծերի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

2. ***ՀՀ ՖՆ և ՀՀ ՊԵԿ գործող, խորհուրդների նիստերում քննարկվող հարցերի և (կամ) իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում.***

2025 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից քննարկվել են ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը, մասնավորապես.

- ✓ 2025 թվականի մարտին քննարկվել է ՀՀ Վարչական դատավարության օրենքում կատարվելիք փոփոխությունների նախագիծը և ներկայացվել է դիրքորոշում,

- ✓ 2025 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ակտիվ քննարկումներ ենք ունեցել ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխությունների վերաբերյալ նախագծի, Պետական տուրքի մասին ՀՀ օրենքում փոփոխությունների վերաբերյալ նախագծի, սոցիալական վճարների անձնավորված հաշվառման մասին ՀՀ օրենքում փոփոխությունների վերաբերյալ նախագծի, մաքսային կարգավորումների մասին ՀՀ օրենքում փոփոխությունների վերաբերյալ նախագծի վերաբերյալ և դիրքորոշում ներկայացրել,

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել և քննարկվել են վերոնշյալ իրավական ակտերի նախագծերը, որի արդյունքներով ինչպես գրավոր, այնպես էլ համապատասխան հասարակական խորհրդի նիստերի ընթացքում բանավոր ներկայացվել են Հանձնաժողովի առաջարկությունները և դիրքորոշումը:

3. Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում.

2025 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին մշակվել և իրականացվել են ՇՄԶ դասընթացներ՝ ՀՀ հարկային օրնսգրքում կատարված փոփխությունների ու դրա հետ կապված ՀՀ կառավարության որոշումների վերաբերյալ թեմայով, անաշխատունակության և մայրության նպաստի հաշվարկման նոր կարգի վերաբերյալ թեմայով:

Հարկային և իրավական այլ հարցերի

հանձնաժողովի նախագահ՝ Վահան Գրիգորյան